


ԲԱՏՆԵՂԻՆ  
 Մ. ՆԱՀԱՆԳՈՑ ՀԱՄԱՐ  
 Տարեկան \$1.50  
 Կեսամսեայ 0.85  
 ԱՐՏՈՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ  
 Տարեկան 10 Զրոնք  
 ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵՐԻ


Խմբագրութեան զրկուած  
 նամակ կամ ծրար ետ  
 չեն վերադարձուիր  
 ԳԻՆ 3 ՍԷՆՔ.



# Հայրենեաց

ՀԱՐԱԲԱՌԵՐՈՒ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



**ՀԱՅԻՆ**  
**ՄԱՐԵՏԻԱՆԻ**  
 AN ARMENIAN WEEKLY.  
 ՀԱՍՑԷ  
 AMERICAN HAI PUBLISHING CO  
 P. O. Box 379, Worcester, Mass.  
 Entered at the Post Office at  
 Worcester, as Second - Class  
 Mail Matter.  
 Subscription \$1.50 a Year.

**ԲՈՎԱՆԳԱՊՈՒԹԻՒՅ**

Միանաք Որ Ապրիլիք -- Խնդա-  
 թիւրման մ'Առթիւ. -- ՏամատՄ ահմուտ  
 Փաշա և Հայկական Խնդիրը. -- Եւր Տա-  
 րի՞ թէ Եւր Դար. -- Սուլթան կը Հմայ-  
 ուի՞. -- Նամակ Սըմիթէն. -- Նամակ  
 Հըտտորէն. -- Ըգգիւմիսուսութիւն. -- Բա-  
 ղաքական. -- Ներքին Լուրեր. -- Բանա  
 սիրական (Գրականութեան Դերը):

**ՄԻՆԱՆՔ ՈՐ ԱՊՐԻԼԻՔ**

Ա

Խմբագիր «Չայն Հայրենեաց»

«Չայն հայրենեաց» խմբագրով  
 առաջարկուող կը պարզէ մեր առաջ հայ  
 տառապանքի մի յոյժ սխուր կողմը: Կը-  
 րո՞ւսկան և յարանուանական խորքը նախ-  
 ճիւղներ գործած է անցելուն մէջ. և դեռ  
 կը շարունակէ պառակտել, բաժնել, աք-  
 կարացնել Հայր իւր գոյութեան համար  
 միշտ ներկայ պայքարին մէջ: Միև-  
 նայն Հայրենեաց ունինք, միևնոյն թշնա-  
 մին ունինք, որ կը խոցէ, կարիւնէ, կա-  
 լերէ, կապառնայ բնաշնչել անխոր լու-  
 սաւորչականը, Բողոքականը, կաթողիկո-  
 շայն յայն վէրքը, յայն տառապանքը, ին-  
 չո՞ւ ուրեմն Լուսաւորչական և Բողոքա-  
 կան չ'միանայ, չ'հարկ, չ'ճճուրէր Մայր  
 Հայրենեաց արիւն արցունքը սրբելու,  
 դժբաղդ Հայութեան կակիճն ամոքելու  
 Հայաստանի վերածնութեան գործին մէջ:  
 Պատճառը կը փնտռես: Ճշմարտութիւնը  
 երկայնքի սուր է, բայց ժամանակն է որ  
 ճշմարտութեան դանակը կիրառուի Հայ-  
 րենեաց վերքին վրայ, եթէ կուզենք  
 վերաբուծել նորա շարաւարից խոցերը:  
 Հայութեան վերաշինութեան ժամանակն  
 է հիմա. մենք պատրաստ ջանադիր լի-  
 նելու ենք, ինքզինքնին ճանշնալ, մեր  
 պակասները, թերութիւնները փնտռել  
 գտնել, տեսնել, ընդունել և... շտկել:  
 Հատ գործելունք մեր սրտով միայն և ծա-  
 նըր սուտեցնելը: Հայութեան գոյութեան  
 և բնաշնչումի վճռողական վարկեաննե-  
 րու մէջ ենք. մեր միտքն ու իմացական-  
 նութիւնն ալ գործածենք և եթէ մենք  
 կը յուսանք այս ճշմարտութեան անցելի ա-  
 պահով և յաղթական, պէտք է մեր կը-  
 րօնական՝ յարանուանական և կուսակցա-  
 կան ուղղութեանց վերջնական հասակէ-  
 տը ընենք միութեան իրականացումը:  
 միութիւն մեր ջանքերու, մեր միջոցնե-  
 րու, միութիւն մեր յոյսերու: Հայուն  
 տառապանքը այնչափ ահաբեկու և խոր է  
 որ ամբողջ Հայութեան համբարշխ ճի-  
 գիրով միայն կրնայ դարմանուիլ:

Որունն է յանցանքը որ «ես հայ եմ  
 ու դու փրոտ ես» ի անիծեալ ոգին դեռ  
 ջնջուած չէ մեր մեջքէն. ո՞վ է պատաս-  
 իանանքն անընդ գործունէութիւննե-  
 րու «եայտա տա վար օրտատա վար յիւ-  
 սէ առակը, բողոքական ալ պատասխա-  
 նատու է, Լուսաւորչական ալ այս ող-  
 բուլի կացութեան Լուսաւորչական զան-  
 զուածէն կասկածոր և վանող քաղաքա-  
 կանութիւն ու ընթացքը, և Բողոքական

զանգուածին ինքնահաւանութենն ու  
 փարսեցիկական ինքնարդարութիւնը ա-  
 հա, ըստ իմ կարծեաց այն գայթակղու-  
 թեան քարք, որք արգելած են Բողոքա-  
 կանին ու Լուսաւորչականին միջոցնե-  
 ու ձուլումը Հայութեան կազմարին մէջ:  
 Լուսաւորչականն ընաւ ջանք րրած  
 չէ սիրաշահիլ, քաշել, Մայրենի Եկե-  
 վեցիէն դուրս ելող Բողոքականը, կա-  
 թողիկո, Հայութեան մէկ կողմը. և ընդ-  
 հակառակը գտնուեց հաւածել է, իւր կա-  
 կածանացը և արհամարհանքին, նշուակ  
 ըրած է զանոնք. և Հայութեան իրաւուն-  
 քն իսկ զլացած անոնց, Հայութեան  
 տարախորհած է զանոնք:

Հապա Բողոքականները... Մայրե-  
 նի Լուսաւորչական Եկեղեցին չը նկատեն  
 իրը հինցած, նախապաշարութեան տե-  
 ւելորդապաշտութեան և տգիտութեան  
 «Փաշարա յներով փաթթուած հատա-  
 տութիւն մի, հողեւորութեան զօրով,  
 հողին սնուցանելու անկարող բարոյա-  
 կանութիւն յառաջացնելու անընդունակ  
 և դարուս ողբոյն պահանջներէն յետամը-  
 նաց. և հետեւապէս, Լուսաւորչած,  
 դարգացած, հողեւորութեան բարձրա-  
 ւանդակներն սուրացող. և բարոյականա-  
 ցած, կամ գէպ այդ փառաբար իրէտը-  
 ներն՝ ձգտող հողերէն շին կրնար գոհա-  
 ցում ստանալ այդպիսի Պայտքած հա-  
 տատութեան մի ծոցը, ուրեմն ալ բա-  
 ժան մնալ հարկ է, որոյն կազմակեր-  
 պութիւն պահել, օտարանալ անհրա-  
 ժեշտ է:

Ձէ՞ որ բողոքականին արածելու ա-  
 րօտը Լուսաւորչականն է. ամէն մի յա-  
 լելում Բողոքականին թուոյն վրայ Լու-  
 սաւորչականի մի պակասումն կենթացէր:  
 Բողոքականը սարկու, գորանալու հա-  
 մար Լուսաւորչականը կողոպտելու է,  
 այլաբանութիւն խօսելով. ալ ուրեմն Բողո-  
 քականութեան և Լուսաւորչականութեան  
 շահերը իրարու կը բաղդին. և ահա կը-  
 ուրը. կասկածը. ալ Լուսաւորչական ու  
 Բողոքական կը լինին երկաթ ու կաւ իրար  
 չեն փակիր: Երտակ է արդարանալի՞ է  
 Լուսաւորչականին քաղաքականութիւնը  
 և ընթացքը, ուղի՞ն է արդարացի՞ է Բո-  
 ղոքականին այդպէս խորհելը. կրնանք  
 կաւ երկաթ լինել միացման խնդրոյն  
 մէջ, և դեռ Հայութեան անունը կրել  
 մեր վրայ ո՞չ... հոգւոյս խորքէն իմ  
 բոլոր ու ժողովութեամբ կը կոչեմ, ո՞չ...  
 այս երկուստեք ձեռք առած ընթացքն  
 ինքնապանութիւն է... ազգասպանու-  
 թիւն է, ոճիր... Կոտորած մի կը լի-  
 նի Հայաստան. անօթի, բորիկ, մերկ  
 սոված որբերու անհամար բազմութիւն  
 մի կը ներկայանայ մեր առաջը պատարմը  
 հայ կը խնդրեն մեզմէ. ցնցոտի մը ձմ-  
 րան ցրտէն պաշտպանուելու համար, այս  
 տեսարանին հանգէ պ մեր սրտերը՝ ը կը  
 կը թան, կը յուզուին. կորոչենք օգնել. այս  
 ընդհանուր ցաւին առաջ Լուսաւորչական  
 ու բողոքականը զինուոր կը հաչա-  
 կեն պահ մը. մէկտեղ կուզան րայց ա-  
 ռանց հեռացուենք իրենց աչքին առջևէն  
 իրենց եկեղեցւոյ յատուկ շահերը. ընդհա-  
 նուր ժողով կը գործարեն հանգանակու-  
 թեան համար գործադիր մասնախումբ  
 կը կազմեն. և այս կատակերգութեան  
 սխալատեսն եղողներ կրնան իրականա-  
 ցուենլ այս ար րքներուն միջոցին յառաջ  
 եկած ողբալի երկութիւնը՝ սրովհասեւ  
 Լուսաւորչականը ու Բողոքականը երբ

մէկտեղ կուզան չոր հայի կտոր մը դը-  
 նելու հայ որբին ափին մէջ. ամէն մէ-  
 կը կուզէ շահագործել պարագան իր շա-  
 հերը յառաջացնելու համար: Ո՞վ պէտքէ  
 լինի ժողովին ատենապետը, ատենադպի-  
 րը. Մասնախումբին քանի՞ն Լուսաւոր-  
 շական, քանի՞ն Բողոքական ըլլալու է,  
 կարողութիւնը խնդիր չէ. կրօնքնէ նկա-  
 տելու կէտն. դրամն Պատրիարքարան թէ  
 միտնորաց զրկելու է. ահա՛, խնդիր-  
 ներ սրով կը բաղդի ժողովը ժամերով.  
 Հանգանակութիւնը կը յետաձգուի. սկզբ  
 բունքի խնդիր կայ մէջ տեղ. Լուսա-  
 ւորչականը ու Բողոքականը յարանուա-  
 նական հաշիւներ ունին մաքրելու... և  
 որբերը կուզան... ձիւնին վրայ, ցուր-  
 սին մէջ. ձեռներն տարածած, սմբած  
 սովալուկ...:

Այս չէ՞ կը ամ ժողովներու սովորա-  
 կան ելքն: է՛հ, սա Բողոքականներուն  
 հողի շահագործիչ, նպատակին փրոտ  
 շինել, իրենց քաշել է: Ձէ՛ անօրուս է,  
 այս Լուսաւորչականներուն հետ գործ չը  
 տեսնուիր՝ օգէտ են, կրօնամոլ են, ա-  
 հա՛, թէ ինչու գոյութիւն կանեն Բո-  
 ղոքական Լուսարան, Լուսաւորչական Լը-  
 սարան, Բողոքական Հանգանակութիւն  
 Լուսաւորչական Հանգանակութիւն, Լու-  
 սաւորչական Հայկական, Բողոքական  
 Հայկական, Որբարնամ Ընկերութիւնն  
 են:

Պրն. Խմբագիր, «Բողոք Լուսաւոր-  
 շական իր Եկեղեցին երթայ այդթիւն,  
 իսկ Բողոքականին իր ժողովարան, առիկ  
 դուրս ամէն մի ազգային գործի մէջ ա-  
 ռանց խորի ձեռք ձեռքի տուած գոր-  
 ծելու ենք» կը յայտարարէ Լուսաւոր-  
 շական ազատամիտ զարգացեալ կղեր-  
 ամէն, եղիցի, կը կրկնէ Բողոքական նոր  
 սերնդի ծնունդ պատուելին, բայց Լուսա-  
 րանն ալ հանդիսակութիւնն ալ, որբարն  
 նամն ալ դեռ զատ են. և հետեւանքը՝  
 ժողովրդի հարկերին հազիւ 10 կը շա-  
 հագրուի, կը շահագործուի, և ո՞վ է  
 տուժողը՝ որբերը, Հայրենիքը...:

Ի՞նչ է այս աղետալի իրաց վիճակին  
 դարմանը:  
 Կարելի՞ է Հայութեան ամբողջութիւ-  
 նը ներկայ հոգեկան, ազգային և քաղա-  
 քական վիճակի և պայմաններու տակ Լու-  
 սաւորչականին իր եկեղեցին և բողոքականին  
 իր ժողովարան գնալով հանդերձ միանալ  
 ձուլուիլ. Համբարշխիլ ազգային ամէն  
 ձեռնարկներու մէջ այն միամիտ անկեղ-  
 ծութեամբը սր դործի կը միջ մար-  
 դուն ամբողջ ու ժողովութիւնը: Ո՞չ... է  
 իմ պատասխանը: Կարելի՞ է ամբողջ Հա-  
 յութիւնը բողոքականացնել, ոչ անկարե-  
 լի է: Բողոքական փոքրամասնութեան  
 կը դարմանուի՞ այս ուժերու շրտումը  
 և վերադառնալով բողոքականութիւն կը  
 գոհէ՞, կը տուժէ՞: Այս հարց պատասխա-  
 նիններն պիտի պարզեմ յաջորդիւ:

Մ. Պ. ՄԵՐՈՆԵԱՆ  
 ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ. ՀՐԱՏ. ԸՆԿ.  
 ՎԱՐՁՈՒԹԻՒՆ  
 AMERICAN HAI PUBLISHING CO.  
 P. O. Box 379,  
 WORCESTER, MASS.

**ԽԵՂԱՌԻՐՄԱՆ Մ'ԱՌԹԻՒ**

Որչա՛փ ողորմելի են այն մարդիկ,  
 որոնք մէկէ մը վրէժ լուծելու համար  
 կը խեղաթիւրեն անոր ըսածները ու կը  
 հայհոյեն: «Չայն Հայրենեաց», շատ լա-  
 որջած է այնպիսիներուն պառակտանել  
 լուծեմամբ: Գիտակաւոր մարդիկ ու մա-  
 մամուլի ինկած դասակարգը, ահա՛ ժո-  
 դովրդի բարոյական դաշինները:

Անցեալ ամսոյ 28ին Դաշնակցութիւն  
 հրապարակային ժողով մը ունեցաւ Ուս-  
 տրի մէջ, իւր «Պերճախօս», ներկայացու-  
 ցիչը՝ Ի. ցոյց դնելու, և փոխարէն ժողո-  
 վրդի քակիւն մօտենալու, փայլուն խոս-  
 տու մներով: Խօսեցաւ ներկայացուցիչը  
 թափթուկ ու հատուկաւոր նախադա-  
 ստութիւններով և պատմական խեղաթիւ-  
 րումներով: Ծառ մ'էր որ ո՞վ գրեմ է որ  
 խմբագրուած է և պատու ունեցան լու-  
 լու Լորէնցիք, Պատուցիք ու Ուսուցի-  
 ները: Եւ դեռ ո՞վ գրեմ քանի՞ երջանիկ  
 քաղաքներ նայն բաղդին պիտի արժանա-  
 նան: Գլխաւոր հարցը զէնքի դրամ հան-  
 գանակելն էր:

Պ. Վ. Մանուկան, դաշնակցութեան նո-  
 րիկ նորակապաւորաբար ըստաւոր՝ իրենք  
 90 թուականներէն սկսեալ (սինչ դաշ-  
 նակցութիւն հիմնուած է 92ին) մեծ քա-  
 նակութեամբ զէնք փոխադրած են Հայ-  
 րենիք, և հիմա ալ այդ քանին համար  
 դրամ կը հանգանակեն: Իրաւունք տըր-  
 ունեցաւ հարցումներ ուղղել:

Պ. Վ. Մանուկան հետեւեալ հարցումը  
 ուղղեց Պ. Վ. Մանուկան «կը խեղդի որ,  
 եթէ կարելի էր ըսէ՞ք դաշնակցութիւ-  
 նը եթէ 90 թուականէն զէնք փոխադ-  
 րած է հայրենիք, 96 ին ջարդերուն ատեն  
 քանի՞ դաշնակցական հրացան որոտաց  
 թշնամուոյն զէնք ժողովուրդը պաշտպա-  
 նելու համար», Պ. Վ. Մանուկան՝ ըրած ենք  
 կրկնեք, պիտի ընենք, բայց խոնարհել  
 սկսաւ, ու ընդհանուր խօսքերով խոյս  
 տալ ուղեց: Պ. Մանուկան իր հարցումը  
 կրկնեց և պահանջեց որ պարտը փաստե-  
 րով ու թուերով խօսի կամ իրեն իրաւ-  
 ունք արուի քանի մը խօսք խօսելու:

Ատենապետ ու Ատենախօսն զըլուխ-  
 նին կորսնցուցին, խորհեցան, խորհրդակ-  
 ցեցան ու վերջապէս իրաւունք տրուեցաւ  
 Երոպէ միայն, ու ամենայն անբաղաւա-  
 վարութեամբ ատենապետ յայտարարեց  
 թէ եթէ երկարի պիտի լռեցնէ, առանց  
 ինկատու ունենալու թէ խօսողն այնպիսի  
 անձնաւորութիւն մ'էր, որ գիտէր յարգել  
 խօսքն ու ժողովը: Պ. Մանուկան շատ կարճ  
 խօսեցաւ և որպէս դաշնակցական գոր-  
 ծառնութեանց կեդրոնավայրերին մօտէն  
 ծանօթ, փաստերով ու թուերով ցոյց  
 տուեց պօստախօսներու ոյժը՝ ըսաւ որ  
 վանի ջարդին ատեն մինչ հազարի մօտ  
 ինքնապաշտպան երիտասարդներ կային,  
 Դաշնակցութիւնը միայն 18 հրացան ու-  
 նէր, Կարինի և Տրապիզոնի, ինչպէս և  
 աննշան բացառութեամբ, ուրիշ տեղերու  
 կոտորածներու ատեն ոչ մի Դաշնակ-  
 ցական հրացան չը պայթեցաւ: Ինչ  
 եղած էին այդ «մեծ քանակութեամբ»,  
 տուած զենքերը: Իր խօսքը վերջացուց  
 հրաւիրելով ներկայները՝ որ չը խնայեն  
 իրենց դրամներ Հայրենիքի շահուն հա-

(\*) Այդ ճառի մասին «Չայն Հայրենեաց»,  
 մերժեց տող մ'անգամ հրատարակել:  
 ՈՍԲ.

մար, բայց դրամ չըսան այնպիսի անգիր որոնք նպատակին չեն ծառայեր:

Պ. Վառճապետի լիազորական գաղտնի- ցութիւն արգարացնել ջանաց, և այնչափ խաղ գտնուեցաւ, որ ստակալի պարծենե- կոտ պատասխանութեամբ յայտարարեց թէ իրենք շատ զէնքեր ունին (սուտ) մարդիք սուէք մեզ որ փոխադրեն (?!) հիմա ալ մարդ կուզէ եղեր...

Ահա՛ իրականութիւն մը, որ անգիր սուտած էր թերթի մը հայայտիչ ու մա- մուլին ոչ պատուարեք տողերուն, որ ունէր հեղինակը յայտնի «կրնամ», մը նայն ուզեց ըսել հոն, բայց իր պատասխանը արդէն ստացաւ: Աւրին «ամբոյս» ի կիրքը գոգորդ չէ եղեր, զի առ խօսքե- ռու մէջ կիրք գոգորդու ոչինչ կայ, ժող- ղովորդի արդար զայրոյթն է որ հոտ արտա- յատուեր է: Այժմ թող կարմրին խեղա- թիրուղները: ԱՐԳՈՍ

Մեզ համար սկզբունք է չվիճել այն- պիսիներուն հետ որոնք անձն ու գաղտ- փարն իրարմէ-զանազանել չեն գիտեր, ա- տոր համար ամբողջով իվեր մեր անձնա- կանի վրայ եղած յարձակումներուն չենք պատասխանած ու չը պիտի պատասխա- նենք: Երկրայ երկառն ալ չը պիտի հը- րատարակենք, եթէ յայտնի իրականու- թիւն մը չը ինքզինքիւրուէր, ժողովորդի մտքերը պղտորելու համար: Այդ ժողո- վին ներկայ եղողներուն զայրոյթը, այդ խեղաթիւրման առթիւ անկարգաբար ինչ է, բայց կայ և մի հասարակութիւնը որ կապ- կար ուրիշ քաղաքներու մէջ: Որչափ կուզեն մեր հակառակորդները թող հա- լածեն մեզ, այդ անարդար հարմարքը մեզ չի վիրաւորեր, միայն ցանկալի է որ այդ մարդիկը սովորէին զէթ մարդա- վարի լեզու գործածել: ՈՒՐԲ.

ՏԱՄԱՏ ՄԱՀՄԱՆՑ ՓԱՇԱ ԵՒ ՀԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Այնչափ օտարոտի չը պիտի ըլլայ, երբ մեր լուսններուն վրայ հիմնուելով, յայտնաբերուին ազատ մամուլին մէջ, արտանայնաբար գաղափարներ, որոնց ստուգութիւնը շատ մը պատճառներով կասկածի տակ չէ: Անցեալը իր ամէն երեւոյթներով, երբէք մոռնալու չենք, ներկայիս մէջ ալ չը խորհուրդ համար:

Սուլթանին քեռայր Տամատ Մահ- մուտ Փաշային Պօլսէն յերոպա փա- խուսառը, շատ բնական կը թուի, ու մա- նուանդ, նոր Դաւ մը, Սուլթանէն ո՛չ միայն Հայոցս, հասարակ մասնաւորի Ե-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ Ամէն ազգ իրեն Գրականութիւնը ունեցած է, ամենէն քաղաքակրթեալ ազ- գերէն սկսեալ մինչև ամենապակաս ազ- գերը, բայց տարբեր ազգերու մէջ տար- բեր աստիճաններով զարգացած է Գրա- կանութեան ոգին, և տարբեր արդիւնք- ներ յառաջ բերած: Ասիայ երկրները բը- նականաբար չեն կրնար քաղաքակրթեան գրուիլ Եւրոպայի և Ամերիկայի երկրներու հետ զարգացման տեսակետով, և ոչ Աֆրիկայի խորիւրդ կրնան բազմապիսի իրենցմէ աւելի զարգացածներու հետ: Պատճառները զանազան են, շատ անգամ երկրին տիրող կառավարութեան, երկրի դիրքին, իրենց ծագման, միջավայրին, բնաւորութեան, նիւթական վիճակին, և այլն միջոցներու կրնան վերագրուիլ: Չը մարտի թէ այս ամեն պատճառներն ալ իրենց օգտակարութիւններն ու փո- խազարմարար վնասներն ունին ազգի մը բարձրացման նպատակով կամ արգելելու գաղտնիք գրականութեան մէջ յառաջացը նկու կամ յետ մղելու: Բայց ամենէն էական պատճառը անհասարակ ունեցած կարողութիւնները մշակելն է:

Ինչպէս մշակուելու է կարողութիւն- ները, Մարդ ազատ կամք ունի խորհելու խօսելու և գործելու, ուստի կրնայ իր մտքին կարողութիւնները զարգացնել կամ փթնացնել, զօրացնել կամ տկարա- ցնել մի միայն ինքնօգնութեամբ, ահա

րիտասարդ Թուրք կուսակցութեան: Այս դաւը, Սուլթանին կողմէն, ու- բիշ ապացոյց մ'է այն ճարպիկութեան, որով օժտուած է Սուլթան շամիտ, կա- ռավարելու համար իր երկիրը, լաւ կամ յոռի քաղաքակրթութեամբ մը, ժամա- նակին պահանջմանց համեմատ: Այս հա- ճոյակատար ընթացքը, Պետերսը երկիր- ներուն այնչափ մեծ պատուհաս մը չե- ղաւ, ոչ մէկ ժամանակ, որչափ որ Ե- ղաւ Սուլթան շամիտին կայսրութեան օրով:

Այլ սակայն ինչ կրնանք ըսել, զէպ- քերը միշտ նպատուար եղած են, «Մեծ Բռնապետին» հոգ չէ՛ թէ որչափ սուղ արժողութեամբ: Աւ այս օրուան դաւն ալ ճիշդ իր ժամանակին կուգայ, երբ Սուլթան շամիտ կրնայ սպառնալ ըլլալ թէ՛ իր Գերմանիոյ հետ ունեցած անօ- գուտ բարեկամութեան կապանքէն զին- քը ազատողներ պիտի գտնուին Եւրոպա- յի մէջ, որոնք ինքնայտար ու խաղա- ղութեամբ յառաջ պիտի մղեն, Բարե- նորոգմանց գործ մը, տուեարական ա- պահովութեան ծրագրի մը միջոցաւ: Անգլիա և Ֆրանսա, բնականաբար պիտի ըլլան բարեկրթիչները, և այս երկու չը զօր ու բարեկրթիչ կառավարութեանց և ժողովուրդներու միացեալ շահերը, պիտի ապահովեն կառուցող խաղաղու- թիւն մը, Թուրքիոյ այն մասին համար, ինչ մասի մէջ որ տեղաւորուին Արեւ- մուտեան քաղաքակրթութեան այս մեծ ներկայացուցիչները, ոչ միայն երկրին ներքին, հասարակ արտաքին թշնամ- եաց Ռուսիոյ դէմ...:

Կարծեցեալ փոխտուական Մահմուտ Փաշա, նա ոչը ճարպիկ քաղաքական դասին, առաջնորդ դերասանը սեպելը, ոչ մեղք, և ոչ յանցանք է, հասարակ է թէ նա, Մահմուտ փաշա, իր ծրագրեր, քիչ մ'աւելի օրինաւոր ներկայացուցիչ Եւրոպայի, աւելի արժանաւոր ու յարգե- լի պիտի ըլլար, ու տարակոյտ չը կայ թէ իր ծրագրին մօտ ժամանակի մը մէջ գործադրուելու պիտի նպատակէր:

Մահմուտ Փաշային մինչև հիմա, Եւրոպայի թերթերուն մէջ հրատարա- կած նամակներով ու տեսակցած անձնա- լորութիւնը այսպէս զարգացողներուն վրայ հիմնուելուն իր անկողմ բարեկար- զիչ մ'ըլլալուն վրայ կը կասկած չենք:

Մահմուտ Փաշա, իր երկրին կամ Սուլթան շամիտի երկրին այժմու կա- ցութիւնը զգուշիկ կը գտնէ, և ժողո- վուրդը զիսկանցեալ և լն. ու այս ամէ- նը միմիայն Մահմուտի անցած համար են, կամ ո՛չ Գրիտանիոյ, մասնաւորա- պէս Հայոց: Երբէք չը թուիր թէ՛ Մահ-

միջոց մը որմէ ոչ ոք կրնայ պրծիլ: Դու ես որ ինքզինքդ պիտի զարգացնես:

Մարդուն մէջ զօրութիւն մը, փա- իտք, բարձրանք մը կայ որ ակամայ մար- դը կը շարժէ. ինչ է այդ զօրութիւն որ անհատն ու ժողովուրդը մէկէն կը հըր- ղեհի և գործելու կը մղէ: Դէպի բարձ- րագոյնը, զէպի լաւագոյնը, զէպի բա- րին ու գեղեցիկին հասնելու բնական իղ- ձըն է որ ամբողջ մարդկութեան ճակա- տագիրը իր արին մէջ ունենալով նաև մը զեկամարին նման ազգերու. ժողո- վուրդը և անհատներու զեկները իր ուզած կողմ կը դարձունէ:

Այս յառաջ երթալու ոգին է որ զգա- լի կերպով ազգած է և կազմէ մտքերու վրայ, նոյն իսկ մարդկութեան նախնա- կան վիճակին մէջ սորվեցուց իր ամէն պիտոյքը հոգալ և այսպէս օրէ օր տարուէ տարի և դարէ ի դար նոր զգացումն րով տողարուած սկսաւ խորհիլ, հնարել միջոցներ, որոցմով ապագայ սերունդն ալ կարող եղաւ օգտուիլ: Այսօր քաղա- քակրթի աշխարհի մէջ ամենամեծ դերը զոր կը կատարէ քիչը նոյն իսկ մարդը հնարեց ինքնօգնութեամբ:

Գիր հնարուել է վերջ Գրականութիւն քալ առ քալ զարգանալ սկսաւ, մինչև որ իր դարուն մեծ միտքը կուսակցութիւն Մահմուտը հնարեց, որով հանուր մարդ- կութիւն օգտուեցաւ և որով տասնու- հինգերորդ դարը կը պանծայ ներկային մէջ և պիտի պանծայ ապագային մէջն ալ: Գրականութիւնն է որ կը յեղաշրջէ կը բարեփոխէ ամբողջ մարդկութիւն:

մուտ Փաշա կարեւորութիւն տալով Հայ- կական խժոճութիւնները իրեն իբրև փաստ պիտի գործածէ, ըստններուն և ընկերներուն ստուգութիւնը ապահո- վելու համար: Բայց թուրք փաշան եր- բէք խորհած է թէ, քանի որ ինքը ներ- կայ վիճակին դէմ բողոքող մը կը թուի պէտք է ինկատի աւելուլ այն վիճակը, որուն մէջ գտնուած է Հայ ժողովուրդը վերջին քառորդ դարէն աւելի ժամանա- կի մը մէջ. ու ի մասնաւոր վերջին տաս- նեակ տարիներու այն անհանդուրժելի կացութեան և սրածութեան, որուն մե- ծագոյն պատճառը եղաւ իր անբճագը, Սուլթան Ապալի շամիտ. որուն անխո- հեմ ընթացքը, ո՛չ միայն ներկայ զու- ելի վիճակին մատենցին թուրքիոյ ժո- ղովուրդները, հասարակ, Օսմանեան կայս- րութեան սակավաման կամ քայքայման օրերը մինչև իր ծերանութեան դուրսը հասուցին և իրամ ու ազգոտ դասակար- զին համար մշտնջենական, թէ ոչ սոր- կութեան լուծ մը դարձնեցին ահա ինչ որ Սուլթան շամիտ ըրաւ, ու թերեւս ինքն ալ զգլ ց. ու արիւրայ այնչափ զարմանալի պարագայ մը չէ, վասնզի շատ բնական է որ ամենամեծ բռնա- կալք իսկ օր մը ելլէ ոչ այնչափ իրենց ամարգութեամբ աշուղ հասուցած մա- սուց խղճահարութեանն մղեալ. հասար- նայն իսկ իրենց անձին, ու իրենցներուն համար պատրաստած դժոխարկը արհաւ- րաց թիւնն, զգամ թէ՛ շատ գէշ ըրին, օրինաւորին դէմ մեղանչեցին ու զղջան:

Սուլթան շամիտ ճարպիկ անձ մ'է նա ամէն մարդէ աւելի լաւ կը հասկ- նայ իր երկրին կացութիւնը, ու այն վա- զահաս պատուհասը, որ գալու է. իր ու իր կայսրութեան զիտուն, բայց որովհե- տեւ, նա իր անխոհեմ ճարպիկութեամբ սպժմ, մինչև այն տարիներ յառաջ մղած է իր գործիքները, իր հրոսակա- խմբերը, և լն. որոնք ներկայիս, նոյն- իսկ առանց իր անմիջական հրամանին ու կամեցողութեան պիտի թաղուին և հարտահալուին այն երկիրը, որուն ան- բարեկարգ վիճակին պատասխանատու- թիւնը, քաղաքակրթի աշխարհին տո՛ղի- անմիջական կերպով իրենց վրայ կը ծա- նանար, հասարակ Սուլթան շամիտի: Այս գիշակիւր ազգաւանդու խուճիքը, Տամատ Մահմուտ փաշայի լաւագործ իսկ այնչափ զլխէ գուր կը լն, որ Սուլթանին բա- րի կամեցողութեամբ բաւական չէ ինք- նուրյն բարենորոգում մ'ընել բնիկ երկ- րին մէջ. ու միւս կողմէն Հայ և թուրք միահագր յեղափոխականաց փառքերը Եւ- րոպային մէջ այնպիսի կացութեան մը կը մատնեն շամիտը, որ շատ բնական

Շատ մը քաղաքակրթեալ ազգեր այսօր կը պարծին իրենց ունեցած մեծ անձ- նաւորութիւններով:

Գրականութիւնը ներշնչեց իրենց այն- պիսի ոգի մը, որով կարող եղան մեծա- մեծ գիւտեր հնարել և զոհել զանոնք յօգուտ մարդկութեան, Գալիլէոսի, Նեւ- տոնի, Ֆրանքլինի, Էտիսիլի գիտան ու գործերն անմոռանալի են և իրենց յիշա- տակներն անջնջելի են, քանի թուրքիւնը կը կենայ և մարդը կապրի:

Աւելի մօտերս նոյնպէս բանաստեղ- ծական արագաբեկին մէջ կը փայլին մեծ հանճարներ, Գրականութեան սիրահա- րներ որք իւրեանց հրաշալիքներով ազ- րու օրինակներ եղած են: Քանի՛ մեծ եղած է աշխարհահռչակ բանաստեղ- ծին վիթթոր Հիւլիօ ռոզեցուցութիւն ըզմանակ աշխարհի վրայ: Որքան փայ- լուն ճանապարհներ սփռու են զբական աշխարհի մէջ Հոմերի, Շէքսպիերի, Կէ- թիլի, Տանթէի երկերը: Կարծէ որ այս- պիսի անհատներ ունեցող որ և է ազգ մը փառքով պարծիլ անոնց վրայ, սակայն քանի որ ընդունելիք թէ ազգեր տար- րեր աստիճաններով յառաջ գացած են զբականութեան մէջ, ուստի քիչ մ'ալ ստոնցմէ վարիներու նայինք տեսնե- լու թէ անոնց մէջ ինչ դեր կատարած է այս մեծ զօրութիւնը: Թէ և զբեթէ անյիշելի մեծ ազգաց առջև, բայց ար- դարեւ կան ազգեր ալ որ իրենց շրջա- նակը ներածին չափ զբականութեան մէջ կը յառաջանան: Անոնցմէ կրնայ սեպու- իլ Հայ ազգը: Անուարանալի իրողութիւն մ'է թէ զբականութիւնը Հայոց մէջ ալ

կերպով, իր պալատական ժողովներուն սրտումներէն վերջ իր քեռայրը փա- խած ձեւացնէ, ու իր երկրին համար բարեկարգութիւն մուրայ, առանց իր անձը ինդիլի առարկայ ընելով, Ահա միջոց մը, որով Սուլթան շամիտ ան- պարտութիւն մը պիտի երաշխաւորուի Եւրոպայի հասարակաց կարծիքին առջև, ու երկրին ժողովուրդին տգիտութիւնը իրեւ պատճառ ամէն շահատուկութեան ինչ որ ոչ այնչափ պատուհաս արժանի է վերիժառութեամբ. որչափ կրթու- թեան կարեւորութեամբ: Աւ աշխու- թիւնը՝ իրեւ յանցանք կը բաժնուի, Իս- լամներու ու մեզ՝ Հայոցս միջև, իրեւ միևնոյն երկրի բնակիչներ, բայց բարե- կարգութիւնը՝ որուն ժամանակուն. կու- զէ աշխատիլ Մահմուտ Փաշա, ասոր խօս- քը չը կայ, մենք հայերս ասոր կարող ըլլալ չենք թուիր. ու թերեւս Տամա- տի կամեցողութեամբ ու խորհրդով մեք ալ, «Շունք ի վերջանաց տեսան իւր- եանց կերթցն» պիտի ըլլանք:

Սուլթան շամիտ թերեւս իր ներկա- ստու մեղքն առաջնորդուելով, ու չէ այդ բարեփոխութեան ծրագրը ներկայացը- նել Եւրոպայի առջև բայց կուզենք իր ուշադրութիւնը հրաւիրել այն ամենուն որոնք շատ մը պատճառներով իր կամե- ցողութեանն անկախ ու բնական ինդիլ- ներ են: Այդ ծրագրին յաղագրութիւնը թիւրքիոյ ինպատու աւելի կը զի բանար, եթէ անոր մէջ պարունակէին ամէն ժողովուրդներու համար կատարեալ հաւատարմութեան թերեւս աւելի լաւ կրկայ որ Տամատ Մահմուտ փաշա- յի ծրագիրը ներկայացունենք այս էջերուն մէջ. բարեկարգութիւններու սկզբնաւորութեան համար Տամատ Մահմուտ Փաշայի պարզ ծրագիրն է:

Ա. Հանրային գործերու վրայ զենա- դատութեան թոյլտուութիւն Մահմուտին:

Բ. Գաղաքական յանցանքներու ընդ հանուր մոտացում:

Գ. Օրէնքի առջև ամենուն հաւա- սարութիւն:

Դ. Ին օրէնքին առջև ամենուն հա- ւատարմութիւն:

Ահա մեծ խոստովանութիւն մը, որ գուր կը թուի թուրքիոյ ամենազգեցիկ անձի մը բերնէն. ու դժուար չէ գուշա- կել որ Օրէնքի ի թուրքիա հաւատարա- պէս չէր գործադրուէր ամէն կարգի չը- պատակայ վրայ, ու անտարակոյտ ինչ- պէս ամէն ոք գիտէ, Հայուն ու թուր- քին միջև:

Շարունակելի Ա. Կ. Բ.

մեծ դեր կատարած է: Հայեր ալ ունե- ցած են իրենց գիւլագուցի ու մեծ մը- քեր: Եթէ մեծ՝ գիւտ մը չը կոչենք, ինչ պիտի գոչենք Ս. Մերոպայի և Սա- հակայ ազգին մատուցած ծառայու- թիւններ, ասոնք էին որ հիմ գրին Հայոց Գրականութեան. երբ օր մը աւելի լաւ ըմբռնեց մեր Հայնազգայն, և գրակա- նութեան ներքին արժէքը, այն ատեն լաւ պիտի հասկանք որ զբականութեան և զբի առաջին օրը, Հայ մտքերու ստեղծագործութեան առաջին օրն է մեր Պատմութեան մէջ:

Այս, մեր ազգն « Ի տեսցած է իւր վիթթոր Հիւլիօներն ու Շէքսպիերներ, ինչ որ է վիթթոր Հիւլիօ Ֆրանսայի հա- մար նոյնն է Բաֆֆի մը Հայուն համար: Դուրեան մը Ալիշան մը, Պէշիվաշլեան Գամառ Բաթրալայ մը Հայուն պարծանք ներն են: Աւրին Հայն ալ զբական ու- ժէն ազգեցութիւն կրած է, սակայն հարց մը կը ծանրանայ մեր վրայ. ինչ ո՞ր բազ- մաթիւ չեն այս տեսակ անձնաւորու- թիւններ մեր մէջ. ինչ բան եւ կեցու- ցած է մեզ: Որովհետեւ անհատներէ կը կազմուի ազգ, իր անհատ ըրած չենք մեր բաժին ազգը զբականութեան մէջ աւելի զարգացնելու համար:

Հայկանու Չարունակելի

ՆՈՐ ՏԱՐԻՑ ԹԷ ՆՈՐ ԴԱՐ

(Շար. Նախորդ Թուէն և Վերջ)

Բայց ինչո՞ք թերեւս այս չափով ալ պարզ չը թուի մանց ուստի կը փափաքի կրկնել այս մեծ փառքը որն որ վերջին քրեթէ փակեց սկսուած վիճարանութիւն մը. Պօսթնէն բանասէրի մը և իմ միջեւ:

Մը՝ ձոն Ռիչի գիտունը Յնվր. 1 թիւ Լէյտի շօմ ձրնի մէջ Հրատարակեց յօդուած մը, որով ընդունելով իր քրեթուս սկզբնաւորումը 1901 Յնվր. 1 էն. կը ըստար միանգամայն ցոյց տալ թէ առաջին անգամ աշխարհիս ո՞ր կէտին վրայ պիտի ողջունուի ան Յիշեալ թերթին ըզրկած մէկ յօդուածին արդիւնքն ան եղաւ որ վիճարանութիւնը շարունակուեցաւ իմ և Մը. Ռիչիի միջև թղթակցութեամբ: Իրեն գրած վերջին նամակիս մէջ ըսածս կը կրկնեմ հոս:

Երբ թուականը 1801-1802 և 1899 էր, ինչու համար կըսէինք թէ ժի՞րդ. դարուս մէջ ենք... Որովհետեւ 1800 թուականով վերջացած էր ժի՞րդ. Դարը և անտարակոյս անկէց ետք եկող տարիները յաջորդ դարուն կը վերաբերին: Ասոր համար Գրողները ըսին ժի՞րդ. Դարուն Ա. ին քառորդը ժի՞րդ. Դարուն առաջին կէտը. վերջին կէտը, վերջին քառորդը, ևն. երբ դեռ դարը վերջացած չէր ինչ որ կը ցուցնէ թէ մինչև որ 1000րդ տարին չը ըրացաւ դարն ալ չի վերջացաւ. երբ մենք ուզար ըլլայինք հաշուել դարերն այնպէս, ինչպէս սովոր ենք հաշուել մեր տարիներն ու ժամերը. այն ասան 1801-1802-1899 ժի՞րդ. Դարուն պիտի վերաբերէին: Այն ասան բնականաբար պէտք պիտի ըլլար ըսել ընդհանրապէս ինչ որ կըսենք այժմ...:

Դիտած էք, երբէք որ մենք սարեր կերպով կը գործածենք մեր ամիսները մեր տարիներէն ու ժամերէն, կամ ըսեմ մեր ամիսները մեր դարերուն պէս:

ԱՐՏԱՇԷՍ ԲԻՈԼՈԳԻԱ

ՍՈՒԼՍԱՆ ԿԸ ՀՄԱՅՈՒՈ՞

Պօսթըն կիսովի Փետր. 8 րդ. թուան մէջ գրուած էր թէ, Օր. Մանկահարեան կը պատարաստուի իր հմայիչ ձայնով՝ որ մը Սուլթան Համիտի Պալատին մէջ երգելու ալ չի միջոցաւ անոր գուժը շարժել զի պէս չար ազգը:

Ուրախալ էր կարգաւ այն ներբողները՝ զորս Ամերիկեան թերթի մը կը շարունակէր սու հայ օրիորդը, և յոյժ ուրախալ էր մանաւ յո որ այդչափ բարձր տաղանդներով օժտուած օրիորդ մը իր բազմաշարժար ցեղին ծառայութիւն մատուցանելու չըզնադ անձնու իրութիւնը և յօժարակամութիւնը ունեցած է:

Բայց թող հաճի թոյլ տալ ինձ ազնուափայլ օրիորդը մի քանի զիտողութիւններ ըսել իր ազգին ծառայութիւն մատուցանելու կերպին վրայ:

Ըստ իս անգլուս փորձ է՝ Սուլթան Համիտը հրէշտակային մեծիգիներով մեղ մացնել ջանալով՝ որպէս զի Հայոց շնորհներ ընէ: Անոր ի հասար ի Շահնէշները այնչափ շատ են թուղթերու վրայ որ եթէ անոնց մէկ հարիւր երրորդը գործադրուէր ուղղամիտ վեհապետի մը վաշի անկղծութեամբ՝ մեր ազգին վէրքերը գործումնուած էին արդէն և ալ տրտունջ չէինք ունենար: Դժբաղդար բար հազար փորձեր ցուցուցած են որ կայսերական շնորհի իրատ էններուն ետեւէն՝ ազեալի, շարիքի և կոտորածի հրամանները կերթան միշտ:

Ուստի ոչ միայն օգտակար չէ փորձել զայդ, այլ վնասաբեր մեր դատին. և ազգային արժանապատուութեան վերաբերումը կը տեսնուի ստոր մէջ:

Ազնիւ Օրիորդը աւելի և օգտակար ծառայութիւն մատուցած չըլլար ազգին եթէ իր հազուագիւս տաղանդովը Եւրոպական բոլոր վեհապետներուն Պալատները կրգէ Հայոց ցուցումը՝ զանոնք ի գուժ շարժելու համար՝ հաստակից եղիչայրներու Մատրիարութեանը վրայ և ներպայտի ժողովուրդներուն կարծիքը յուզէ այնպիսի ուժգնութեամբ որ արդիւնքը անմիջական ըլլայ ինպատու Հայոց արգար դատին:

ԱՆԵՐԵՒՈՅԹ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՍՐՈՒԹԻՆ

Փետր. 12

Չայն Հայրենացի ընթերցողներէն ծանօթ է, տեղւոյս մեծաքանակ գործարանի գործադուրը, երեք ամիսներէ ի վեր է որ կը տեւէ և կը յուսամք թէ պիտի յաջողինք:

Այս գործադուրը որ Հայոց նախածնունդեամբ ու զգոզութեամբ կատարուած էր, դժբաղդար նորէն Հայ անուն կրողներու ձեռքով, որոնց հետ և քանի մը Ասորիներ, աւրելուն պատճառ դարձան սքէփ ստոր անուան արժանանալով: Այս մարդիկ չանաղով մեր ազգանք պաղատանքին, զէնքի դիմեցին, զմեզ նուաճելու ու գործարան մտնելու համար, սակայն ցանց կառավարութեան իմաց տալով բանտարկել տալ զանոնք, բայց ինչպէս չէ Հայ անուան Դատարարին դիմեցինք և ազատեցինք, առարկելով թէ դատ չունինք, ի մեծ գարման Դատարարին, որ յայտարարեց թէ երէք տարուան բանտարկութենէ ազատեցիք մեր հակառակորդները:

Բանտէն ազատուելէն երեք ժամ վերջ խոտմազանց ըլլալով զնացին գործելու, հետզհետէ ուրիշ ընկերներ ալ գտան, իրենց պէս բարոյապէս ընկածներ, որոնք Հայ անուան մէկ մէկ արատանք են:

Գործադուրական թերթեր մեծ գործունեակ կը կարգան հայերին որպէս խոտմազանց գործաւորներ, մինչ այսպիսիներ կողմէն մեզ ստորնացնել տաւրին առաջ: մինչև անգամ դրամ-ալ խոտմազանք, դարձեալ մերժեցին մեզ:

Սակայն սքէփը միտ ալ պատիւ չունի: Գործադուր ընկէն ճիշդ ութ օր վերջ, երբ գործադուրներ ստիպուած ներս մտան բոլոր սքէփները որոնց թիւը 60 կը հասնէր մեծ անպատուութեամբ վաճառուեցան: Եւ այդ մարդիկ, որ առաջ Բաթրալի մէջ քիչ շատ գործ ունէին, գործադուր աւրելով, ցածնալով կողմէն աւելի դրամ չունի, այսօր պարտաւ իւր երթի փողոցները կը շարին Անցեալները մեծաքանակ գործարան մը դարձնելու ինչպէս, Պօսթ ինչ պատասխանեց թէ հայերը սքէփ էք մեզ գործ չենք կրնար տալ:

Կը տեսնաք Հայ եղբայրներ, գործատէրն ալ կատէ սքէփը ալ բաւ է արատուորեն Հայ անունը, գործադուր արդար չաչերը փոստենք, ու թմենք դերամտէրներու առաջ ստիպանաք ու մեզ նուաստացնենք: Ալ բաւ է գիտանաք պաշտպանել մեր շահն ու պատիւը:

\*\*\*

Նախորդ տարուայ Դեկ. 10 ին, տեղւոյս գործադուր ընդ Հայրենէն երեքը Բաթրալի գացած էին գործադուր աւրող ձորձ Թագաքեանը համոզելու որ ետ կենայ գործադուր աւրելէ: Կուտի կը ըզնունին և զանի ծեծելուն համար կը բանտարկուին: Բայց շնորհիւ Զանգաթեաններու անմիջական երաշխաւորութեամբ կազատուին: Յուլ. 15 ին դատ տեսնուելով մէկ մէկ տարի տաժանակիր աշխատութեան դատապարտուեցան: Ասոնցմէ կարապետ Բարուական Սեբաստացի, չկրնալով դիմանալ տանջանքներուն հոգին աւանդեց ֆետր. 3 ին սգոյ մէջ թող լով զինք ճանչցողները, որ իւր մեղք ու գրաւիչ բնաւորութեամբն ծանօթ էր: 95 ին Գարնան մասնութեան մը գրեթէ թողելով երկար ատեն Կ. Պօլսի բանտ կեցած էր:

ՍՄԻՔՑԻ ՄԸ

ՆԱՄԱԿ ՀԸՏՄԸՆԵՆ

Փետր. 12

Հըտսընի Հայերը անցեալ կիրակի տեղւոյս Գանկըզէնընը Զըշին մէջ ժողովուրդով, որբերուն օգնելու նպատակաւ բացուած հանգանակութիւնը շարունակեցին, առաջուց հանգանակուած գրամը §513 հասցնելով և որովհետեւ գործերուն թոյլ ըլլալուն պատճառաւ շատեր մեկնած էին տեղէն հարկ համարուեցաւ անոնց ալ դիմուելէ վերջ Հան

գանակութիւնը փակել և ընդհուպ Պատրիարքարան դրկել գոյացած գուժարը: Այս առթիւ կամակերպութիւն մը ունենալու համար թէր ու զէմ կարծիքներ փոխանակուելէն վերջ երեք անգամ պաշտօնի կոչուեցան որոնք նախ և առաջ հանգանակութեան գործին պիտի հսկեն աւելի արգելանք որքան համար և միանգամայն ծրարք մը պատրաստելով պիտի ներկայացնեն յառաջիկայ կիրակէն գուժարուելիք ժողովոյ թէ կազմակերպութիւնը ինչ նպատակի ծառայէ:

Ծաւ է ըսել թէ Հըտսընի Հայերը 10 տարուան գոյութենէ մը ի վեր տակաւին կազմակերպութիւն մը չէին կրցներ ունենալ: անցեալ տարի այս նպատակաւ քայլ մը աննուեցաւ թէ և բայց դժբաղդար ինչ ինչ պատճառներու քերամք անյարտաւեւութեան մատուցեցաւ կը յուսարինք թէ այս երկրորդը առաջինին բաղդին չպիտի արժանանայ: Օ. Ա. ՍԷՄԵՐՁԵԱՆ

ԸՆԴԻՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՁԻՆ ԽՕՍԲ

ԱՌ ՏԻՎԻՆ ԵՍԹԵՐ ԲԷՇՈՇԵԱՆ

(Շարունակութիւն 21րդ թիւէն և վերջ)

Իսկ այդ այդ Որբուհիներու Հոս ժամանելէն մինչև իրենց մեկնած օրը անոնց նկատմամբ Զեր ունեցած վարմունքը թէ որքան քննադատելի է, այդ մասին մեր անձամբ և մօտէն ունեցած ծանօթութիւնը հոս համարտու մէջ ընկելէ յետոյ կը թողու՞մ որ ընթերցողներ անաչառ զատողութիւն ընէ:

Ինչպէս ըսած էի սկիզբէն մինչև վերջ մէկ ճիշդ թիւերէն գտնուեց մեր ճանկին մէջ ունենալու համար, մինչև իսկ ինչպէս շատերէ լսեցինք Պ. Հայկու Սազօ-Եանի միջոցաւ վոզիլիք ընի Կառավարութեան դիմեցիք հնազարդ. \$2,000 ի երաշխաւորութիւն մը խոտմազանք շարս Որբոց համար: Ինչպէս կը հարցանենք հոս, երբ չը յաջողեցաք ինչո՞ւ ինպատ մտադար: Բողոքովին սխալ էին Զեր ըսածները, թէ այդ Որբոց շագնաւ յանձնելու հոգնարութիւնը յանձն առած էին Արմէնիքի Ռեզիլ Գօլթիքի քարտուղար Տեթ. Իրին և Մէթ օտիլիք պատմապարտի Տեմետիլն ու Տեւրուհի: Վասն զի մենք մէկէ աւելի վկայներ ունինք հաստատուելու թէ Գաղղ. շոգնուելին վրայ ո՞չ Տեթ. Կրին և ո՞չ այլ ոք ներկայ էր մեզի հետ սրբելու համար այդ դժբաղդ մանկիկներու յուսահատութեան արցունքները, երբ մեթ օտիլիք պատմապարտի երկու սպասուհիները բերելով Որբուհիները շոգնուելի վերայարկելով (կը վէրջէ) վրայ կենդանի ձեռքերու պէս ձգեցին և մեկնեցին կարող երկար սպասել, ըսելով հեռացան անմիջապէս:

Իսկ երբ դուք կը ջանաք ինքզինքներդ արդարապէս ըսելով թէ Պրիմ Բորթ գացի Որբերու համար պատրաստած նուէրները զրկելու համար, մենք կ'ընենք թէ իրաւ է որ, որ Որբուհիները կ'ըսէին թէ ճիշտ նոյն առաւել Զեցիլէ ծրար մը ստացած էին, բայց չի տեսնաք նշանաւոր բան մը ներկէր կոչուելու արժանի վազուելու ունէին, ոչ վրանին ծածկելու վերմակ մը և ո՞չ ալ իրենց անօթութիւնը զոնէ մէկ որ յաջեցնելու բաւական պաշար ուստի չը կրցինք զխնալ թէ ինչ էր Զեր զրկածը: Բայց անտի հազարաւոր տօբար արժող նուէրներ զրկելէ տակ մեծ առաքնութիւն գործած կ'ըլլի նէիք, եթէ երկու օր աւելի մնայիք Նիւ-Եորք, և տեղւոյս կարող ազգայնոց ունցա Տիկնանց դիմելով դրամական և հանգրծեցիլ օգնութիւն մը ձեռք բերելէ յետոյ Մայրական գործակալը և Հոգաձուութեամբ Զեր իսկ ձեռքով տեղաւորելիք զանոնք շոգնուելին մէջ քարտուղար անձի մը խնամոց յանձնարարելով գաւանդ: Այս էր օրինակն ձեռք և զայս կը պահանջէր Զեր պարտաւորութիւնն ալ: Մենք պարտ կը համարիմք խոտմազանք թէ մեր կողմանէ շատ մեծ ծանայութիւն չը կրցինք մատուցանել զբժարողաբար այդ լքեալ և դժբաղդ Որբուհիներուն: Վասն զի ճիշդ վերջին օրը

զրկէ անոնք զիրենք այդպէս թողուած անոք և անտեղուց, և մանաւանդ նոյն պահուէն մեզ հետ գտնուող Պ. Յարութիւն Թէրզի Մանուկեանի անոնց հոգածու լինելու մասին ցոյց տուած յօժարակամ պատրաստակամութիւնը մեր վրայ այնքան վստահութիւն ներշնչեց որ ալ չը խորհեցանք իսկ յաւաքոյն կարգադրութիւններ ընել: Եւ ինչ որ բերինք Ձեռն շնորհակալութիւն ակնկալելու նպատակաւ երեք շէր, զի մեր խղճի Հանգարտութեան մէջ իսկ ստացանք մեր վարձատրութիւնները:

Որքան խորին շնորհակալութեան արժանի է Պ. Թէրզի Մանուկեանի բարեւորութիւնը, նոյնքան ջերմ շնորհակալեաց արժանի է Մարտիկոյ մեր սիրելի ազգայնոց և անուանդ ազնիւ և գովելի վարմունքն այդ թշուառները խնամելու և զանոնք իրենց մարց գիթի վերադարձնելու մասին ցոյց տուած ջանքը և հոգածութեան համար:

Այսպէս ուրեմն այդ Որբուհիները Հոս բերելով այդպէս անգթօրէն վարուելու իրաւունք չունենալով համարտու բացարկել, և անոնց նկատմամբ հոգածու և համակիր գտնուող անձանց մեր շնորհակալութիւնը յայտնելէ յետոյ կը վերջացուենք:

ԽԱԿ. ՎԵՐՁԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՑ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Փետր. 9 ին Լորտ Ռօպէրթ Հասեր է ի Մօսկիթ Թիվը. կը ըսուի թէ Պօլսիցը ամենագորաւոր թերթները այդ կողմերը փոխադրել սկսեց են, և կենթադրուի թէ ինչպէս մտադիր է այդ ճամբով յարձակել Ազատ Նահանգացի վրայ Փետր. 12 ին հեռագիր մը կը տեղեկացնէր Զօրավար ձեւարթի 6000 զօրքով Պոլսի վրայ քայլելու:

Փետր. 13 ին ստուտեան հեռագիր մը ուրախացուց Անգլիական ժողովուրդը Պիսթատնիք ըսուած գիրքը Զօրավար Յրէնչ գրաւոր է, երկուան հեռագիր մը սիրութեան փոխեց այդ առժամանակեայ ցնծութիւնը, նոյն գիրք վերստին գրաւած էր Պօլս բանակ մը, որ բուռն յարձակումը ըրած էր նոյն օր Յրէնչի Զօրաբանակին վրայ, սատարի ձեռնարկաւոր մարտ մը տեղի ունեցի է, երկու կողմի կորուստները անձանօթ կը մնան:

Պօլսիցը վերջին յարձակումը կ'երեւնայ Պոլսի արմաղակեան կորուստները վրայ կը լինի, որով պիտի կործանի Սիբրիակի ժողովուրդը Լէյտի Սմիթի ազատման մէջն յոյսեր:

Բօլզգալուրի կողմէն և Պօլսիցը բուռն շարժումներ կ'ընեն, Անգլիական բանակներու հարգրեպիտութիւնը կարելու վտանգներ սպանալով:

Բանիմ օր առաջ լուրով տարածուած էր Լոնտոն թէ Պոլսի վերջին նահանջը մասնաւոր նպատակով մը յարձակումը աւելի ապահովելու համար էր, բայց վերջին յուրերը ընդհանուր հասաւ մը տարածեցին թէ Պօլսիցը յաղթական են, և այդ ճամբով Լէյտի Սմիթի ապատումը անյուսալի է յետ այսու:

Table with 2 columns: Item description and Amount. Includes 'Անգլիոյ ընդհ. ծախքը Պօլսիկան պատերազմին համար' and 'Կաճ կարտոսեաց'.

ԱՄՍՐԱՒԱ

Փետր. 12 ին հեռագիր մը կը ծանուցանէ թէ Զօրավար Պոլսի անյաջողութիւնները զէջ ազդեցութիւններ ձգեց են Աւստրալիոյ մէջ: Կարողնալ Մօրան մասնաւոր ճառով մը շնչանց զօրուոր միջոցներ ձեռք առնելու Աւստրալիոյ մէջ պատահելիք դժուարութեանց հանդէպ և ցաւ յայտնեց զինուորական գունդերու անկէ հեռացման համար, վստահութեան լեզուով Աւստրալիոյ պաշտպանութեան նկատմամբ:

ՉԲՆԱՍՏԱՆ

Չինու կայսեր սպանու մը Մայր կայս-
րու հետ չարամանա անհիմն կեցիք։ Չի-
նաստանի արտաքին գործոց նախարարու
թիւնը պաշտօնապէս յայտարարեր է
Տէրութեանց Դեսպաններու թէ՛ կայսրը
պիտի ընդունի զիրենք ի Պալատ փեար-
19 ին—Չինական տարեգրիւն։

Փետր. 11 — Չինական կայսրու հին նոր
հրովարտակ մը հանած է զիմադրելու
համար օտար ահրաւթեանց Չինական
հողի վրայ տեղաբնանց ծաւալմանը։
Հրամանագիրը մասնաւորապէս ուշադ-
րութիւն կը հրահարէ արգելելու համար
իտալական կառավարութեան յառաջնա-
ղացումը։ նա մասնաւորապէս Ֆրանսայի
« փոստիկ չու », ի մէջ բռնած զիրքը կա-
սեցնել, սպաննալով պատերազմ հակա
նակ պարագային, ուրիշ հրովարտակով
մալ կը խրատէ թող զաշտօնակայները
թէ՛ գրգռեն հայրենասիրական զգացումն
կասեցնելու և զիմադրելու համար թող
օտար գորութեան դասալիքներուն զէմ։

ՆԱՓՈՒՈՆԻ ԱՅՐԻՆ ԶԻՒԱՆԻ

Էօսէնի՛ Նափոխու Գ ին այրին, որ 75
տարեկան է, ծանր կերպով հիւանդ է։
Երբէկները մահամեծ կը նկատեն զինք։
Ժամանակաւ 1853 ին Եւրոպայի ամենա-
բազումը երբ կը կենակցէր աշխար-
հակալի մը հետ, քիչ վերջ ամենաբարձ-
րապէ՛ երբ իր ամուսնոյն աքորանքը կը
զուտուէր, Նափոխու հետեւալը խօսած
էր իր գեղեցկութեանը նկատմամբ։ «Ո՛չ
նա իմ կինս պէտք է ըլլայ, մինչև անգամ
թէ նա Բրէնտէս մը ըլլինէր նորա գե-
ղեցկութիւնը առաւել արժէք ունի քան
թագակրութիւն մը»։

ՄԱՐԿԻԱԿԵՐՆԵՐ

Տք. Նաս Ամերիկեան Միախօնար իշա-
րաւային Ամերիկէ, նոյն տեղւոյ Գաննիպայ
ներու վրայ հետեւալ ուշադրաւ տեղե-
կութիւնը կուտայ. «Օր մը Լիպարիլ (Քա-
պուս)՝ գետը պտոյտի երայ, երկու քնի-
կներ մակոյղը կը քէլին զէպի եզերք ու
երկու բնիկներ կեցած միւ կը ծախէին։
Երբոր մեղտեսան կանչեցին։ Ճիշտ հիմա
նոր մորթած ենք երկու մարդիկ որք կը
պատկանին մօտակայ թշնամի ցեղին։
Միւսը՝ ձեռքը մարդու բազուկ մը բռնած
կաղաղակէր «չատ թագէ է հիմա մոր-
թուած»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ունսագէթի մէջ Պրն. Ներսէս Զ.
Տէմիրեանի ընդ Սր. Սօֆիա Պետիկեան
նի Հարսանեաց հանդէսին մէջ որոց Հա
մար § 13,50 հաւաքուեցաւ, որուն հա
մար որոց կողմէն իմ խորին շնորհա
կալութիւնս կը յայտնեմ թող մասնակ
ցողաց և խաղաղ կեանք Հարսին և քի
սային։

Ետեւ Վարդի կիրակի ժամը 10 Ս. Փըր
կիչ Եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ պի
տի մատուցուի։
Օրուան Գարդի նիւթը պիտի ըլ
լայ «Հայ Երիտասարդներ և անոնց Գը
րիստոնէտեան գործերը»։

Կը փափաքի որ թող իր Երիտասարդք
իւր թան ճիշդ ժամանակին ներկայ գըտ
նուի Պաշտաման։

Աղօթարար

ՂԵՒՈՆԻ ՎԱՐԴԱՊԵՏ

Վաղը Աղգ. Լաւարանի մէջ պիտի խօ-
սի Պրն. Ա. Սեւեան, Պատուէն։
ՔԱՆՔՐՏ Ի Որբախնամ Ընկ. մեզ
կը գրէ՝ Ընկերութիւնս իր վերջին նիստի
որոշման համեմատ § 35 դրկեց կ. Պօլիս
Ս. Պատարարքին ի նպաստ Որբոց։

ԲԱՑՈՒՍԷ Է

ԲԱՑԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՉԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ»Ի

Բ.—րդ. Վեց ամսեայ

Փետրուարէն մինչև Մեպտեմբեր՝ 85
սէնթ. Սեպտեմբերէն անդին բաժանորդ
չենք ընդունիր ընդ բաժանորդագրուի
չանկացողները մեզ զրկելու են 85 սէնթ։

Նիւ Եօրքի մեր գործակալն է Պ. Ե.
Արսէնեան. Հոն մեզ սպասուի ունեցող-
ները վճարելու են իրեն։

ԱՉԴ

Կը ծանուցանենք Հայ հասարակու-
թեան թէ՛ Պոսթոնի Թայլըր փողոցին մէջ
նոր խանութ մը բացած ենք, ուր կը վա-
ճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵ-
ՂԵՆԵՐ ԶԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ։

Թանձարարութիւնք կը կատարուին
փութով և խնամով։

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

Մեր հասցէն է
Tyler Grocery Co.
113 Tyler St., Boston Mass.

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ի ՊՈՍՏՈՆ

Պոստոնի Թատերական խումբը պի-
տի ներկայացնէ Մ. Պէշկիթաշլեանի

ԱՐՇԱԿ Բ. ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Փետր. 22 Հինգշաբթի երկուց, ժամը
7½ ին (Ուաշինկթընի Ծննդեան օրը), Ե-
րիտասարդաց Գրիտտոնէական Միութեան
սրահին մէջ՝ 48 Պայքարէն փողոց։

Պուստը ջանք չէ խնայած այս ներ-
կայացումը յաջողութեամբ կատարելու
պատրաստութիւններուն մէջ։ Տոմարի-
ներու գինն է 25, 35, 50, և 75 սէնթ. Կը
վաճառուին հետեւեալ տեղերը։

Պոստոն 38 Hudson. st., 113 Tyler st

Վաճար՝ թանու՝ Պայքար, Իսթ Բէյ՝ Գրիլ՝
Չլսի, Լին և Մուլըն Հայկական ճաշա-
րանները։

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Ի ԼՈՐԷՆՍ

Լորէնսի Հայկ. Արեւելեան Թատե-
րախումբը առաջնորդութեամբ Պրն.
Կ. Մինասեանի պիտի ներկայացնէ Անմահ
Դուրեանի Սեւ Հողերը ի նպաստ Հայկ.
Ժող. Գրադարանի։

Ետեւ Վարդի Մարտ 3 ին Շաբաթ Ե-
րկուց ժամը 8 ին Սիթի Հոլի Թատերա-
սրահին մէջ։

Պուստը ջանք չէ խնայած իւր եռա-
մեայ փորձառութեամբ փայլ մը ըն-
ծալով՝ ներկայացման, առաջնորդու-
թիւն տալով գեղարուեստի փափկու-
թեան։

Տոմարներ կը վաճառուին շափահա-
ներու 35 և 25 իսկ Մանր տղայոց համար
15 սէնթ։

Ի Դիմաց Հայկ. Ժող. Գրոց Վարչ.
Ատենադպիր Գրադարանագետ
Զ. Մ. Ե. Յակոբեան

Ա Ն Ա Զ Ի Տ

Հանդէս Աղգային, Գրական և Գե-
ղարուեստական. բացուած է Բրդ. օտար-
ուայ Բաժանորդագրութիւնը։

Հասցէ ԱՐՇԱԿ ԶՊՊԱՆԵԱՆ

6 ԲԼԷՍ Տը Լ'Օտտօն Բարիզ

ՄԵԶ ՄՕՏ ԿԸ ԾԱՌՈՒԻ

ԱՆԳԼԻԵՐԵՆԷ ՀԱՅԵՐԷՆԷ ԲԱՌԱՐԱՆ
Աշխատասիրութիւն Պ. Ռ. ԹՈՐՈՍԵԱՆԻ
Գինն է 2.50 Տղար

Գ Ն Ե Զ Է Բ

Ձեր Կօչիկները, Ռեպրները և Հան-
դերձեղէնները։

Ա. Ա. Մազ Լաֆլի 137 Մէյն Սթ.
Հասակաւորաց ձեռքով կարուած Կօչիկ-
ներ նորածն 3 աւաղանոց այժմ § 2,25

Լասթիկ ճիւղէ § 2,50

Գործաւորական Կօչիկ § 1,25

Մարդու վարտիկ, շապիկ առաջ հա-
տը 0,59 իսկ այժմ 39 սէնթ, իսկ զպզը
5 սէնթ։

Մեր Հայ յաճախորդները շատ գոհ
մնացած են մեզմէ։

ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

ԱՐՄՕՆԻ ՄԸ

Նուագիւն ճաշակ ունեցողներուն
յարմար, և ժամն գնով։ Գրիմի Ռոմա-
գրութեանս։

ԿՈՒՉԷՔ ԴՐԱՄ ՓՈՒՍԿՐԵԼ

Դիմեցէ՛ք Ան՝
Սարգիս Գ. Սարաֆեան

1060 Փ. Օ. Պօքս, Ուսար, Մաս.

Դրամ կը փոխադրենք Թիւրքիոյ բո-
ւր քաղաքները։ Կեդրոնաւորին է Պար-
բերդ, Տեար Յովհաննէս Պարբուրեան,
որ երկար տարիներու գործունէութեամբ
և վարկով հարստանալ է և Կ. Պօլիս Տ.
Գէորգ Պարբուրեան։ Մեր Գործակալ
ներն են. Մարթեա Սարգիս Պօնտոգ-
լեան. Չմշկանակ՝ Սարգիս Սարգ քէ-
չիլեան. Բալու՝ Գարեգին Քիւր՝ ճեռն.
Չնքու՝ Յակոբ Տաղաթիկեան։ Թիւրքի-
ոյ ուրիշ բոլոր քաղաքներն ալ դրամ կը
փոխադրենք Պարբերդի միջոցաւ։

Մարտի 1 թէ՛ հեռագրով և թէ՛ նա-
մակով դրամ կը փոխադրենք և նուա-
յին տոմարներ կուտանք։

Ուսարի մէջ կը վաճառենք պատեա
սիկարի թուղթ և ուրիշ շոտ տեսակ
Տաճկական սպաննալներ։

Պանութիւն հասցէն է՝ 14½ Արջ Սթ.
Ուսար, Մաս. Ետեւ Վարդարութիւն ուղ-
ղուելու են Ան՝

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ. — Մեզ դրամ զըր-
կելու է Մընի Օրարով, Պանքայի շէքով
կամ սպաննալագրեալ նամակով։ Ոչ ա-
պահովագրեալ նամակով դրուած դրամ-
ներուն պատասխանատու չենք։

ԲԱՑՈՒՍԷ Է ԲԱՑԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՅՆՈՐ ԿԵԱՆՔՈՒ

Հանդէս Աղգային, Գրական և Գե-
ղարուեստական։

Միակ լուրջ Աղգային Հանդէսը, որ
երկու տարիէ ի վեր կը հրատարակուի
Արտասահմանի մէջ։

Իր անցեալ ու ժամանակակից Հայ-
կական պատմութեան վրայ ըրած ու-
սումնասիրութիւնները անաղբիւս են։

Աղգային յեղափոխական կեանքի վը-
րայ ըրած իր տեսութիւնները լուրջ ու
արժանի են ամեն հայու ընթերցանու-
թեան։

Երիտասարդներն անկէ կ'օգտուի
չափահասները աւելի պաշար կրնան ըս-
տանալ, ձեռքեր իրենց հին յիշատակները
կրնան գտնել հոն։

Տարեկան Բաժանորդագրին է 2 տո-
լար, վեցամսեայ 1 տոլար։

Հասցէն է՝
Mr. L. FRANK.
32 Chesterton Rd.
London, W. England.

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ

Ս. Տամպուրաճեան
509 2րդ Ալլիս. 28 և 29րդ փողոցի մէջ
Նիւ Եորք

Տեղական և արեւելեան բազմաթեանակ
նպարեղէններ
Լաւագոյն տեսակ ընդեղէններ և մըր
գեղէններ։

Եղանակին համաձայն թարմ բոնջարե-
ղէններ և պտուղներ, առօրեայ թարմ
միս, հայկական պանիրը փառնոր-
15 c., մեծաքանակ զնոցաց համար 13½
սէնթ. Ուսարի պատուական պըրուրը և
ձեռածը փառնոր 3 սէնթ, մեծաքանակ
զնոցաց համար 2½ սէնթ. Գրիթապուրը
(զէյթուն) փառնոր 10 c շատ զնոցներուն
համար 9 c. կանաչ զէյթըն, որթատերե
(եափրախ) ընտիր կրկնու, Ամախի պոմ-
եա՝ մեծաքանակ զնոցաց համար փառնոր
2½ սէնթ, հայկական զէյթունի իւր Այն-
թապ հալմախ (ընտիր տեսակը), լոխուժ
(ամեն տեսակով), Քըսթըլ, լէպլէպու
(տեսակներով), ոսպ (ազնուած կամ ա-
ռանց ազնուելու), սուժախ, սիւսաւ, Պօլ-
սոյ խաշար պանիր, քիւրճ, անտոն,
շահրիէ (փառնոր 5 սէնթ), մաքա-
րօնի փառնոր 6 սէնթ, մեծ քէն սուսաւ,
մեծաքանակ զնոցաց համար հատը 25 c.,
մէկ փառնոր 7 սէնթ, քեն տոմարէն
հատը 7 սէնթ, շոր ձիւրան, սալոր, շա-
միչ (տեսակներով), սապօն և խոտիկ։

Նամակով կը շաճառարարութիւն-
ները փութով և քիչ վարձքով կը կա-
տարենք մեր անձնական կառքերով։

ՄԱՍԻՍ

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ


Ի ՊՈՍՏՈՆ

Ներսէս Մ. Թովմատեան և Մերկեր
Մ. Թովմատեան կը ծանուցանենք թէ՛
մեր 20½ Hudson փողոցի նպարեղենի խա-
նութը փոխադրած ենք ի թիւ 38. այն
փողոցի մէջ միանալով Յովհաննէս Քար-
բուզեանի հետ. այժմ շատ աւելի զիւ-
րութիւններ ունինք ուղղակի Տաճկաստա-
նէն սպաննալներ բերելու և կը վաճառենք
նաեւ մեծաքանակ (Հոստել)։

Մեր քով կը վաճառուին Աւսթրի պա-
տուական պըրուր, ձեռած և կրկնու,
ոսպ՝ Տաճկաստան ազնուած, պամեա,
սիւսաւ, սպի ետրախ, խոտերի պատարմայ
տաճկաստանի մաքուր ձեթ, ապը զնելու
թարմ պանիր, տոմարէն սալոր, խաշար
պանիր, ուրիշ շատ մը տեսակներ։ Ու-
նինք հիւսնաքանոցի սիկարի թուղթ, Կ.
Պօլսոյ լոխուժ, լէպլէպու տեսակներով։

Մընիքի աւելի բարեկամներու տալիք
յարմար նուէրներ, ուրիշ տեղ չէք կըր-
նար գտնել, մեծաքանակէք, կրկնու և
փարսեաներ, խառնէր տէյթրմէն են։
Փորձեցէք և գոհ կը մնաք գրեւ ընկե-
րու թեան հասցէին։

Massis Grocery Co.
38 Hudson St., Boston Mass.



ԱՐՄԱՐԱՄԵԱՆ ԵՂՔԱՐԳ

Օղիի և Մասթիքայի Պատարասողներ
Արեւելեան օղիի և Մասթիքայի անդ-
րանիկ և միակ գործարանը ունինք Մ.
Նաճանգաց կառավարութեանէն վաւերաց-
եալ։

Միայն պատուական խաղող է շա-
միչէ կը պատարասենք։ Մի իմէք օտար
և անախորժ խաղողներ, որ չլինաւ թէ՛
Խմեցէք Հայրենիքի զուտ օղին և մաս-
թիքան, որ խնամքով կը մատակարա-
րենք։

Ի թէ՛ որ և է Հայ մը մանաւանդ Հայ
թիւրկեր կրնան վաւերացնել ամենա-
փոքրիկ խաղողախորթիւն մը մեր ըմպե-
կեաց մէջ, պատարաս ենք իրենց փորձ-
րուն համար թող ծախքեր և 500 ստոլար
ալ գրու վճարել։

Աւստրիայի կրնան ստանալ օղի և
մասթիքա 111 Summer St. ի ըմպելեաց
մեծ վաճառատուէն։

Ուրիշ քաղաքաց Հայեր կրնան գի-
մել կամ գրել ուղղակի մեր գտարանը։
Abraham Bro's
20—22—24 Back St.
Providence R. I

ՄԱՐԿԻԱԿԵՐՆԵՐ

Ուստրի մէջ երկար տարիներէ ի վեր
հաստատուած ենք մեր յատուկ պոլլուրի
գործարանը։ Սոյն գործին մէջ մեծ փոր-
ձառութիւն ունենալով, ամենալաւ ցը-
րենէ կը պատրաստենք ընտիր պոլլուր։
որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատ-
կութիւններով՝ տանտիրներուն և ճա-
շարանակներուն զնախատութեան ար-
ժանացած է։ Կը պատրաստենք նաեւ նոյն-
պէս ընտիր ձեռած և կրկնու։

Ուստի ամեն ով որ կուզէ ընտիր
և սիրտաւոր կերակուր ըլլելու պոլլուր
և ձեռած ունենալ, թող քիմէ ուղղակի
մեզ։ Ապագայներ փութով կը կա-
տարուին. մանրամասն տեղեկութեանց
համար պէտք է գրիմէլ հետեւալ հասցէին։

Ուստր, Պոլլուրի Միացեալ Ընկ.
151 Իւնիսթրիթ, Աւսթր Մաս.
Տաճկական տեսակ տեսակ սպաննալ-
ներ ալ կը ծախենք։

ՄԱՐԹԻՆ ԳԻՆՕ

ՀԱՅ

Վաճառուող տնական ամեն կարգի
կահ կարանեաց։
Հայեր տակէ պատշաճագոյն տեղ
չեն կրնար գտնել զնելու, մահճակալ,
մեթիքս, սեղան, ջեռան, կարպետ և ուր
ի կարգին։

Հասցէն է՝
MARTIN KEENOW
79 Green St.; Albany N.